

«ՎՏԲ-Հարմարավետ»



Կուտակային - ծախսային, բազմարժուքային, ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմամբ

1. Ավանդի համար սահմանվում են հետևյալ ժամկետները և տարեկան տոկոսադրույքները.

Ավանդի ներդրման գումար (չնվազող մնացորդ)/ ժամկետ	91 – 180 օր	181 – 270 օր	271 – 365 օր
ՀՀ դրամ			
200 000 -ից	9.50%	10.50%	11.00%
2 000 000 -ից	9.75%	10.75%	11.25%
20 000 000 -ից	10.00%	11.00%	11.50%
ԱՄՆ դոլար			
500 -ից	3.75%	5.75%	6.50%
5 000 -ից	4.00%	6.00%	7.00%
50 000 -ից	4.50%	6.00%	7.50%
Եվրո			
300 -ից	2.00%	3.50%	4.50%
50 000 -ից	2.50%	4.00%	5.00%
ՌԴ ռուբլի			
20 000 -ից	0.50%	1.00%	1.25%
200 000 -ից	0.75%	1.25%	1.50%
2 000 000 -ից	1.00%	1.50%	1.75%

- Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից:
- Ավանդն անսահմանափակ անգամներ լրացուցիչ մուտքագրումներով և ելքագրումներով է:
- Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
- Ավանդի ժամկետը ինքնուրույնաբար որոշում է Ավանդատուն՝ 91 օրից մինչև 365 օր:
- Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը.
 - ՀՀ դրամով ավանդների համար՝ 200 000 դրամ
 - ԱՄՆ դոլարով ավանդների համար՝ 500 դոլար
 - Եվրոյով ավանդների համար՝ 500 եվրո
 - ՌԴ ռուբլով ավանդների համար՝ 20 000 ռուբլի
- Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են ժամկետի ավարտին:
- 180 օր ժամկետից ավել ժամկետով ավանդների համար, եթե ավանդի ներդրման պահին հաճախորդը հայտարարում է, որ հնարավոր է պահանջի ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցում (բայց ոչ շուտ, քան ներդրման օրվանից 90 օր անց), Բանկն ի սկզբանե կնքում է ավանդային պայմանագիր՝ տվյալ ավանդատեսակի համար գործող տոկոսադրույքից 1% ցածր տոկոսադրույքով, իսկ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վճարումը կատարում է փաստացի օրերի համար, տվյալ ավանդատեսակի պայմաններով, նախատեսված, տվյալ պահին Բանկում գործող 90 օր ներդրված ավանդների համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
- Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև ավանդի մարման ժամկետից՝ 30 օրացուցային օր առաջ:
- Ավանդից լրացուցիչ ելքագրումներ կարող են կատարվել ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև ավանդի մարմանը նախորդող օրը, ընդ որում՝
 - դրամական միջոցների կուտակման արդյունքում Ավանդի համար սահմանված չնվազող մնացորդի հաջորդ շենն անցնելու դեպքում անցման հաջորդ օրվանից ֆիքսվում է նոր (ավելի բարձր) չնվազող մնացորդի համար սահմանված տոկոսադրույք,
 - ավանդի գործողության ողջ ընթացքում ավանդի չնվազող մնացորդ է հանդիսանում ավանդի գումարի կեսը, ընդ որում՝ դրամական միջոցների ելքագրումների արդյունքում Ավանդի համար սահմանված չնվազող մնացորդը չի նվազում:

11. Ավանդը բազմարժուքային է՝ Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավանդատուին հնարավորություն է ընձեռվում բազմակի անգամ իրականացնել ավանդի ամբողջ գումարի (ոչ մասնակի) արժույթի փոխարկում առանց ավանդային պայմանագրի լուծման`
 - Բանկի փոխարժեքով՝ արժույթի գնման և վաճառքի հայտ-պայմանագրի հիման վրա,
 - պահպանելով հաշվեգրված (կուտակված) տոկոսները,
 - պայմանագրի կնքման պահին «ՎՏԲ - Հարմարավետ» ավանդի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով:
12. Ավանդի առավելագույն չափը սահմանվում է մինչև 50.0 մլն ՀՀ դրամ, 100 000 ԱՄՆ դոլար, 50 000 եվրո և 2 500 000 ՌԴ ռուբլի:
 1. Բանկը Ավանդատուին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով`
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման վճար՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝ Բանկի համապատասխան որոշմամբ:
13. Ավանդը տոկոսային եկամտի հետ միասին վերադարձվում է պայմանագրով սահմանված ավանդի ժամկետի վերջին օրը, գումարը փոխանցելով Բանկում Ավանդատուի անունով բացված քարտային կամ այլ բանկային հաշվի:
14. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջի դեպքում, գումարը վերադարձվում է վերջին փոխարկման արժույթով՝ կատարելով տոկոսների վերահաշվարկ տվյալ պահին Բանկում ցպահանջ ավանդների համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
15. Ավանդի ձևակերպումը իրականացվում է Ավանդատուի՝ իր անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
16. «ՎՏԲ-Հարմարավետ» ժամկետային ավանդը ապահովագրված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով: